Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

Խնդրում ենք հավաքել ձեր փաստաթղթերն ըստ սույն ցուցումների: Կցվող փաստաթղթերի առավելագույն չափը չպետք է գերազանցի 7MB-ը (մոտ 100 էջ): Չափից դուրս մեծ ծավալով կցված ֆայլերն ամենայն հավանականությամբ կմերժվեն մեր սերվերի կողմից: Մի՛ կցեք բրոշյուրներ, լուսանկարներ կամ կայքէջերի տպած պատկերներ:

Բաժին A (Փաստաթղթերի ցանկ)

Բաժին B (Դիմումներ/ձևաթղթեր)

1. Լրացրած **DS-160** դիմումը բոլոր դիմորդների համար (ներառյալ ընտանիքի անդամները)
2. Լրացրած **DS-156E** միայն էական նշանակության աշխատողների և մենեջերների համար. սույն ձևը չի պահանջվում ընտանիքի անդամների կամ ներդրողի համար:

Բաժին C (Տեղեկություններ դիմորդի մասին)

1. Ամեն դիմորդի համար ընտանեկան կապերը հավաստող, ինչպես նաև ամուսնական կարգավիճակին վերաբերող փաստաթղթեր (ամուսինների դեպքում ամուսնության վկայականը և/կամ երեխաների ծննդյան վկայականները):
2. Գլխավոր դիմորդի ինքնակենսագրականը կամ CV-ն:
3. Գլխավոր դիմորդի՝ E վիզայի ժամկետի ավարտից հետո վերադառնալու մտադրության մասին ստորագրված հայտարարությունը:

Բաժին D (Ուղեկցող նամակ և հավելյալ փաստաթղթեր)

1. Ուղեկցող նամակը պետք է նկարագրի, թե ձեռնարկությունն ինչպես է որակավորվում E-1 կամ E-2 կարգավիճակի համար և պետք է ներառի շահառուի յուրահատուկ հմտությունների և որակավորումների նկարագրությունը, եթե դրանք արդեն իսկ նկարագրված չեն ինքնակենսագրականում (CV): Նամակը պետք է անդրադառնա E-1 կամ E-2 վիզայի որակավորման համար անհրաժեշտ բոլոր պահանջներին:
2. Դիմորդի փորձը հավաստող և նրա էական հմտություններն ընդգծող փաստաթղթեր: Սրանցից են ցանկացած համապատասխան դիպլոմ, աշխատանքային որակավորման հավաստագրերը և/կամ նամակներ նախկին գործատուներից:
3. Ներառեք ԱՄՆ կորպորատիվ հարկային հայտարարագրերի առաջին երկու էջերը, որոնք ցույց են տալիս վաճառքի մասին IRS-ին զեկուցած տեղեկությունները դիմումին անմիջապես նախորդող վերջին երկու տարվա կտրվածքով, ինչպես նաև ընթացիկ տարվա շահույթի և վնասի քաղվածքը:
4. Ապացույց, որ ձեռնարկությունը ներկայում կամ ապագայում կարողություններ կունենա անհրաժեշտ եղածից ավելի եկամուտ ստեղծել դաշնագրի կողմ հանդիսացող երկրի ներդրողի կամ նրա ընտանիքի անդամների նվազագույն ապրուստի համար (ծրագրված ապագա կարողությունները պետք է ձեռք բերվեն բիզնեսի մեկնարկից 5 տարվա ընթացքում):

Բաժին E (Սեփականության հավաստում)

1. Դաշնագրի կողմ հանդիսացող երկրի քաղաքացին որպես հիմնական ներդրող/սեփականատեր պետք է հանդիսանա բիզնեսի՝ առնվազն 50%-ի սեփականատերը:
2. Եթե ընկերությունն ունի մի քանի սեփականատեր կամ մասնաճյուղ, կամ եթե սեփականության շղթայի մաս են կազմում միջանկյալ կառույցներ, ապա նեռառեք հետևյալը (ըստ անհրաժեշտության).
   1. Կազմակերպության դիագրամ անվանական ցանկով, որը ցույց է տալիս ընկերության սեփականատերերի լիարժեք կառուցվածքը,
   2. Սեփականության իրավական ապացույցը (օրինակ՝ հիմնադրման սերտիֆիկատը, մասնաբաժինների սերտիֆիկատը, առևտրային գրանցման քաղվածք) սեփականության համապատասխան շղթայի դեպքում,
   3. Անձնագրերի՝ միայն կենսաբանական տվյալներ պարունակող էջի պատճենները, ինչպես նաև մայր կազմակերպության ամեն բաժնետիրոջ համապատասխան բաժնեմասի փաստաթղթի պատճենները:
3. Եթե ընկերությունը հանրային առևտրային ընկերություն է բազմաթիվ բաժնետերերով (որոնցից ոչ մեկի բաժնեմասը չի գերազանցում 50%-ը), ապա ներառեք.
   1. Գրավոր հայտարարագիր, որն իրապես արտոնված է կազմակերպության պաշտոնյայի կողմից և որտեղ նշվում են բոլոր արժեթղթերը, որոնց հիման վրա ընկերությունն իրականացնում է իր առևտրային գործունեությունը,
   2. Վերջերս թողարկված առևտրային տեղեկության պատճենը, որը վերաբերում է արժեթղթերի սեփականատերերի քաղաքացիությանը:
4. E-1 վիզայի դեպքում, եթե ընկերությունը հիմնադրված է ԱՄՆ-ից դուրս, ներառեք ընկերության սեփականատերերի դիագրամը և գրանցման սերտիֆիկատ այն երկրից/երկրամասից, որտեղ ընկերությունը գրանցված է:

Բաժին F (Ներդրման կամ առևտրի կատարման ապացույց)

Treaty Trader և Treaty Investor դիմորդները պետք է տրամադրեն հետևյալ փաստաթղթերը.

ՆԵՐԴՐՈՒՄ (E-2).

Հաշիվ-ապրանքագրեր, չեղարկված չեկեր և փոխանցումներ համապատասխան հաշիվ-ապրանքագրերով, համապատասխան դեբիտներ ցույց տվող բանկային քաղվածքներ, դեպոզիտային համաձայնագրեր, դեպոզիտային հաշվի քաղվածք ԱՄՆ-ում և դեպոզիտի ստացական (ըստ անհրաժեշտության):

ԱՌԵՎՏՈՒՐ (E-1).

Վաճառքի հաշիվ-ապրանքագրեր, գնման ապրանքագրեր, մաքսային բեռնագրեր թողարկված ԱՄՆ հայրենիքի անվտանգության դեպարտամենտի/մաքսային և սահմանների պաշտպանության գործակալության կողմից, գույքը հավաստող փաստաթղթեր, ապահովագրական փաստաթղթեր, որոնք հավաստում են ԱՄՆ ներկրված ապրանքների մասին:

Գործը չի զննվի, ներառյալ հարցազրույցի նշանակումը, մինչև մենք չստանանք ներդրման կամ առևտրի մասին հավաստի ապացույցներ: